



ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ԵՐԵՎԱՆԻ ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ  
2011-2012 ՈՒՍՏԱՐՎԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ



1. Երևանի Անանիա Շիրակացու անվան ճեմարանը կատարում է մրցութային ընդունելություն հանրապետության, ինչպես նաև Սփյուռքի և արտասահմանի նախադպրոցական տարիքի երեխաների և հանրակրթական դպրոցների շնորհալի սովորողների համար, որոնք ցանկանում են ստանալ հանրակրթական խոր գիտելիքներ, բարձրակարգ և լիարժեք միջնակարգ կրթություն:

**2010 թ. ապրիլից ճեմարանը «Ռաունդ Սքվեր» (Round Square) միջազգային դպրոցների համաշխարհային ասոցիացիայի լիիրավ անդամ է: 2008թ.-ից ճեմարանը ԱՊՀ երկրների միջազգային բակալալրիատի (ՄԲ) դպրոցների ասոցիացիայի անդամ է:**

**Ճեմարանը միջազգային բակալալրիատի դպրոց դառնալու հավակնորդ է:**

**2010 թ. «Մայքրոսոֆթ» ընկերության համաշխարհային գրատենյակի կողմից ճեմարանը ճանաչվել է աշխարհի 56 ամենաառաջավոր նորարար դպրոցներից մեկը:**

2. Ճեմարանի կրթական կառույցներն են՝
- «Փոքրիկ ճեմարանական» կրթահամալիր
    - նախակրթարան (4 և 5 տարեկանների համար)
    - կրտսեր դպրոց (1- 4-րդ դասարաններ)
  - միջին դպրոցի 1-ին մակարդակ ( 5-7-րդ դասարաններ, պետպատվերի և վճարովի համակարգեր)
  - միջին դպրոցի 2-րդ մակարդակ և ավագ դպրոց 8-12-րդ դասարաններ, պետպատվերի և վճարովի համակարգեր, 11և12-րդ դասարաններում առարկաների լայն ընտրությամբ տարբերակված հոսքային ուսուցում)
  - հեռակա նախապատրաստական դպրոց (կիրակնօրյա դպրոց): Հեռակա դպրոցում լայնորեն կիրառվում է նաև հեռավար ուսուցումը:
- Սովորողների թիվը կրտսեր դպրոցի խմբերում սահմանվում է 10-14, միջին դպրոցի 1-ին մակարդակում՝ 14-16, միջին դպրոցի 2-րդ մակարդակում և ավագ դպրոցում՝ 16-18:

**3. Ընդունելությունը պետպատվերի տեղերում.**

3.1. Ճեմարանի պետպատվերի տեղերում ընդունելությունը կազմակերպվում է միայն 8-րդ դասարանում, ուր կարող են ընդունվել հանրապետության միջնակարգ ուսումնական հաստատությունների ընթացիկ տարվա 7-րդ, ինչպես նաև արտասահմանյան (այդ թվում՝ ԱՊՀ) երկրների համապատասխան դասարանն ավարտած աշակերտները (տես նաև 3.3, 3.5 և 4.3 կետերը)՝ ընդունելության քննությունների արդյունքներով՝ մրցութային կարգով:

Դիմորդները հանձնում են գրավոր քննություններ.

- հայոց լեզվից,
- մաթեմատիկայից,
- ռուսաց լեզվից( ոչ մրցութային),
- օտար լեզվից (անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, իսպաներեն, պարսկերեն՝ դիմորդի ընտրությամբ, ոչ մրցութային):

Բոլոր քննություններն անցկացվում են հանրակրթական դպրոցների առարկայական ծրագրերի պահանջներին համապատասխան:

3.2. Ճեմարանի միջին դպրոցի 7-րդ դասարանն ավարտած սաները պետպատվերի համակարգի 8-րդ դասարան կարող են ընդունվել փոխադրական քննությունների (հայոց լեզու, ռուսաց լեզու, օտար լեզու և մաթեմատիկա) հիման վրա՝ մրցութային կարգով՝ նախատեսված տեղերի 60%-ի չափով:

**3.3. Առանձնահատուկ ընդունակություններ դրսևորած, այդ թվում՝ հանրապետական օլիմպիադաներում 1-ին, 2-րդ կամ 3-րդ կարգի մրցանակներ շահած սովորողները կարող են ընդունվել ճեմարանի պետպատվերի համակարգի համապատասխան դասարան առանց ընդունելության քննությունների՝ հարցազրույցների հիման վրա ամբողջ տարվա ընթացքում:**

3.4. Ճեմարանի պետպատվերի համակարգի 2011-2012 ուստարվա 8-րդ դասարանի ընդունելության համար սահմանված է 95 տեղ (տեղերի թիվը պայմանական է): Ընդունելության գործընթացի կազմակերպման հիմնական դրույթներն են.

3.4.1. Գրավոր աշխատանքների արդյունքների ամփոփման համար կիրառվում է 200 միավորանոց համակարգ («0.1»-ից մինչև «20.0» միավոր՝ 0,1 սանդղակով)՝ սահմանելով նվազագույն դրական գնահատականը «8.0» միավոր:

3.4.2. Մրցույթն անցկացվում է բոլոր քննությունները դրական գնահատականներով հանձնած սովորողների միջև՝ հայոց լեզվից և մաթեմատիկայից ստացած միավորների գումարի հիման վրա:

Մրցույթից դուրս մնացած դիմորդները նույն գնահատականներով կարող են մասնակցել 8-րդ դասարանի վճարովի համակարգի մրցույթին թափուր տեղերի առկայության դեպքում: Ճեմարանի ավագ դպրոցի վճարովի համակարգի սովորողները հետագայում կարող են տեղափոխվել պետպատվերի համակարգ (տես 3.5 կետը):

3.4.3. Հավասար միավորների դեպքում նախապատվությունը տրվում է.

- ա) ռուսաց և օտար լեզուներից առավելագույն գումարային միավորներ ստացած դիմորդներին,

բ) ճեմարանի միջին դպրոցի սաներին,

գ) ճեմարանի կիրակնօրյա նախապատրաստական դպրոցի սաներին:

**3.4.4.** Քննության գնահատականը դիմորդն իրավունք ունի ներկայացնել վերանայման՝ ըստ ճեմարանում գործող կարգի :

**3.4.5.** Ընդունելության քննություններին մասնակցելու համար սահմանվում է 4000 դրամ քննավարձ:

**3.4.6.** Քննավարձից ազատվում են երկկողմանի ծնողազուրկ, զոհված ազատամարտիկների, բազմազավակ (5 և ավելի երեխա ունեցող) ընտանիքների երեխաները, մնացած դեպքերում՝ ընդունող հանձնաժողովի որոշմամբ:

**3.4.7.** Դիմորդների փաստաթղթերն ընդունվում են հունիսի 1-ից 20-ը՝ ժ. 9<sup>00</sup>-16<sup>30</sup> (բացի կիրակի օրերից):

**3.4.8.** Ընդունելության քննություններն անցկացվում են հունիսի 21-ից 28-ը:

**3.4.9.** Մրցույթով անցած սաները համարվում են ընդունված սահմանված ժամկետներում ծնողների (կամ նրանց փոխարինող անձանց) հետ համապատասխան պայմանագիր կնքելուց և հրամանագրվելուց հետո: Ընդունելության մասին որոշումը հրապարակվում է հուլիսի 7-ին:

**3.5.** Ճեմարանի միջին և ավագ դպրոցների վճարովի համակարգերի սովորողները, բացի 7-րդ դասարանն ավարտողներից (տես 3.2 կետը), ովքեր կիսամյակն ամփոփել են դրական գնահատականներով, կարող են տեղափոխվել պետպատվերի համակարգ՝ համաձայն ճեմարանում գործող կարգի: Կրտսեր դպրոցը հաջողությամբ ավարտած սաները մրցութային կարգով տեղափոխվում են միջին դպրոցի պետպատվերի համակարգի 5-րդ դասարան՝ համաձայն ճեմարանում գործող կարգի:

**3.6.** Ուսումնադաստիարակչական գործընթացը կազմակերպվում է շուրջօրյա կամ երկարացված օրվա աշխատակարգերով: Սովորողներն ապահովվում են սննդով, անհրաժեշտության դեպքում՝ հանրակացարանով, միջին դպրոցի 2-րդ մակարդակի և ավագ դպրոցի սաները՝ նաև կրթաթոշակով:

#### **4. Ընդունելությունը վճարովի կառույցներում.**

**4.1.** Ճեմարանի կրտսեր դպրոցի 1-ին դասարանի ընդունելությունը կատարվում է ըստ դիմումների ստացման հերթականության դպրոցին հոգեբանական պատրաստվածության հետազոտության արդյունքների հիման վրա: Ընդունելությունը և խմբերի համալրումը իրականացվում է խմբերի համասեռության (աղջիկների և տղաների թվի հավասարության) սկզբունքով: 2011-2012 ուստարվա 1-ին դասարանի ընդունելության համար սահմանված է 50 տեղ (տեղերի թիվը պայմանական է):

Ընդունելության գործընթացն սկսվում է ս/թ հունիսի 6-ից առանձին կարգով, որի և կարելի է ծանոթանալ ճեմարանում: Թեստավորման աշխատանքների կազմակերպման համար նախատեսված վճարի չափը 3000 դրամ է:

**2010-2011 ուստարվանից կրտսեր դպրոցում իրականացվում է ՄԲ ինտեգրված կրթական ծրագիրը:**

**4.2.** Կրտսեր դպրոցում և միջին ու ավագ դպրոցների վճարովի համակարգում (տե՛ս նաև 3.5 կետը) ընդունելությունն իրականացվում է մրցութային հիմունքներով, շուրջօրյա՝ թափուր տեղերի առկայության դեպքում՝ համաձայն ճեմարանի ընթացիկ ընդունելության գործընթացի կազմակերպման կարգի:

**4.3.** Արտասահմանյան (այդ թվում՝ ԱՊՀ) երկրների աշակերտների ընդունելությունը բոլոր դասարաններում կատարվում է ամբողջ տարվա ընթացքում, ընդ որում՝ հայ ոց և եզվի ն բավարար չափով չտիրապետող սանի կրթությունը կարող է կազմակերպվել օտար լեզվով անհատական ուսուցմամբ միևնույն և ինտեսսիվ ուսուցմամբ հայ ոց և եզվի իմացություն անհրաժեշտ աստիճանի և հասնելը:

**4.4.** Վճարովի տեղերում սովորող սաները բարձր առաջադիմության դեպքում ապահովվում են հատուկ կրթաթոշակներով:

**4.5.** Միջին և ավագ դպրոցների վճարովի համակարգում ուսումնադաստիարակչական գործընթացը կազմակերպվում է ինչպես հենքային, այնպես էլ շուրջօրյա և երկարացված օրվա աշխատակարգերով: Ցանկացողներն ապահովվում են հանրակացարանով:

**5.** Ընդունելությանն առնչվող բոլոր չնախատեսված հարցերը վճռում է ընդունող հանձնաժողովը:

**6.** Դիմորդները ներկայացնում են՝

- դիմում,
- ծնողների գրավոր համաձայնությունը,
- տեղեկանք բնակավայրից,
- տեղեկանք առաջադիմության մասին (բացի 1-ին դասարանի դիմորդներից),
- ծննդյան վկայականի կամ անձնագրի պատճեն,
- 3x4 չափսի 4 լուսանկար,
- տեղեկանք առողջության մասին (063 և 026 ձևեր):

Դիմումներն ընդունվում են ճեմարանի ավագ դպրոցում (գլխավոր մասնաշենք):

**7.** Բոլոր սովորողների տեղափոխումը կատարվում է հատուկ տրանսպորտային միջոցներով:

**8.** Նախակրթարանի և կիրակնօրյա նախապատրաստական դպրոցի ընդունելության պայմաններին կարելի է ծանոթանալ ճեմարանում:

**9.** Ճեմարանի միջին և ավագ դպրոցների հասցեն է՝ **Նոր Նորքի 5-րդ զանգված, Արտեմ Միկոյան փող. 35, հեռ.՝ 64 01 02, 64 07 87, 64 07 89**, կրտսեր դպրոցինը՝ **Նոր Նորքի 5-րդ զանգված, Գալշոյան փող.15, հեռ.՝ 64 57 05, 66 82 81**: Ճեմարան կարելի է գալ հ.հ. 9; 32; 40; 58; 82 երթուղային տաքսիներով և հ.հ. 22; 28; 40 ավտոբուսներով, կրտսեր դպրոց՝ նաև հ.51 երթուղային տաքսիով և հ.10 տրոլեյբուսով:

Էլ.հասցե՝ [shirakatsylyceum@yahoo.com](mailto:shirakatsylyceum@yahoo.com)

Ինտ. կայք՝ [www.shirakatsy.com](http://www.shirakatsy.com)